ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆ

№ 188/48-Լ «06» 10 2025

ԴԱՍԸՆԹԱՑԸ ԿՐԿՆԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) «Ուսումնական գործընթացի կազմակերպման» կարգի 82-րդ կետը և ղեկավարվելով ԵՊՀ կանոնադրության 57-րդ կետի 10-րդ ենթակետի պահանջներով՝

հրամայում եմ.

1. Դասընթացի կրկնումը կազմակերպելու համար սահմանել հետևյալ կանոնները՝

ա) դասընթացի համար սահմանված բոլոր բաղադրիչներից 0 կամ ոչ անցողիկ միավոր ստացած ուսանողը (եթե ստացած միավորների գումարը չի բավարարում պարտքերի մարման շրջանում սահմանված անցողիկ միավոր ձեռք բերելուն) կարող է մինչև ավարտական ուսումնական տարվա սկիզբը վճարովի հիմունքներով կրկնել դասընթացը և հանձնել քննությունը, եթե առարկայական պարտքերի կրեդիտների գումարը չի գերազանցում 12 կրեդիտը,

բ) կիսամյակի ընթացքում դասընթացի համար սահմանված բոլոր բաղադրիչների գնահատմանը չներկայացած ուսանողի «ՉՆ» նիշը հավասարեցվում է 0 միավորին,

գ) դասընթացը կրկնելու համար և՛ առկա, և՛ հեռակա ուսուցման համակարգում սովորող ուսանողը կիսամյակի առկա ուսուցման դասերի մեկնարկին նախորդող երկու և հաջորդող մեկ շաբաթվա ընթացքում ներկայացնում է դիմում և վճարման կտրոն. վճարումը կատարվում է դասընթացի համար սահմանված կրեդիտների արժեքի չափով:

դ) դասընթացը կրկնելու թույլտվություն ստացած, բայց դասերին չմասնակցած ուսանողը կարող է հաջորդ ուսումնական կիսամյակներում վճարովի հիմունքներով կրկնել դասընթացը՝ բացառությամբ ավարտական կուրսի ուսանողների,

ե) դասընթացները կազմակերպվում են ինչպես առդեմ, այնպես էլ՝ առցանց (առդեմ ձևաչափով կազմակերպելու անհնարինության դեպքում),

զ) ուսանողը կարող է կրկնել դասընթացը ինչպես նույն մասնագիտական կրթական ծրագրի (ՄԿԾ), այնպես էլ ցանկացած այլ ՄԿԾ խմբի հետ, եթե դասընթացը նախատեսված է այդ ՄԿԾ ուսումնական պլանով, իսկ դասընթացի կրեդիտների տարբերությունը չի գերազանցում 25 տոկոսը,

է) առցանց դասընթացը կազմակերպելիս պետք է դասընթացի պլանը, դասընթացին վերաբերող ուսումնամեթոդական նյութերը և այլ անհրաժեշտ տեղեկատվությունը հասանելի

դարձնել e-learning.ysu.am ուսուցման կառավարման համակարգում (ՈՒԿՀ), իսկ դասավանդող դասախոսը շաբաթական մեկ անգամ պետք է առդեմ խորհրդատվություն տրամադրի ուսանողին:

ը) Նախաավարտական կուրսերի ուսանողների դասընթացի կրկնման գործընթացը (դասախոսի համաձայնության դեպքում) կազմակերպվում է ամառային քննաշրջանի ընթացքում, մինչև դասախոսների արձակուրդի սկիզբը, առնվազն 20 աշխատանքային օր տևողությամբ:

թ) Տվյալ դասընթացի քննաշրջանը պետք է կազմակերպել երկրորդ կիսամյակի քննաշրջանի առաջին լուծարքային շրջանի, իսկ առաջին և երկրորդ լուծարքները՝ երկրորդ կիսամյակի քննաշրջանի երկրորդ լուծարքային շրջանի ընթացքում:

ժ) «ը» և «թ» կետերի դրույթները չեն տարածվում մագիստրատուրայի ուսանողների վրա:

2. Անվավեր համարել 17.01.2023թ. №9/55-Լ և 14.11.2023թ. №218/173-Ա հրամանները:

3. Սույն հրամանը տարածվում է 2022/23 ուստարում և դրանից հետո ԵՊՀ ընդունված ուսանողների վրա:

4. Սույն հրամանի մասին իրազեկել ԵՊՀ ուսանողներին և աշխատողներին:

5.Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Ռեկտոր Հ. Հովհաննիսյան